

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

### ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԻԸ

Կիրակի օրեր կը փակեն դուքանին,  
Շատ աշխատեցին գեղական դութանին.  
Դութանն ասաւ ես կը վարեմ հողերը,  
Ցորնով առատ կը լցնեմ հորերը,  
Կը կշացնեմ աղքատի փորերը...

Տարին եկէին <sup>1)</sup> Խոռին կը դցէ դեւը.  
Լեզուն բացարաւ, խօսեց դութանի թեւը.  
Ասաց տարին եկէին կը կը, կը տամ առը <sup>2)</sup>,  
Միջին չի ըմբ խերը, կը դցեմ ըլլայ կառը <sup>3)</sup>.  
Մաճկալո պարտական է մատաղը մորթէ գառը,  
Ուսէ ընասիրի հետ խառը,  
Դութան, ես քու խերին <sup>4)</sup> դուրբան...

Դութանի էշն ասաւ. «Քամակս դուզ ա.՝  
Աղաքս <sup>5)</sup> կեռ ա.՝  
Խոռին ասաւ. «Գետնի տակին կերթամ, տեղս նեղ ա.՝  
Մաճկալն ասաւ հօտաղնուն.  
«Վեր եկէք կերէք խաշիլ <sup>6)</sup> է եկել, մէջ տեղը եղ ա.՝  
Ձեւիշն ասաւ. «Քամակումս ա վեր տուած հացքուց  
Հինած թուրը,  
Տարէնը երկու անգամ կուզեմ սուրը.  
Իմ մեղքն ու խիղճը մաճկալի վնքին.  
Դութան, ես քու խերին դուրբան.

<sup>1)</sup> Թռուաշտա—անձրևաշտա. <sup>2)</sup> Շատ վատ. <sup>3)</sup> Բոյսի առուն է. <sup>4)</sup> Օգոին. <sup>5)</sup> Առաջս. <sup>6)</sup> Փողինծով կերակուր, որի վրայ մէջ տեղը եղ են ածում ուտելիս:

Ճամբարակն ասաւ. «Քառասուն օդ եմ.  
Նրկու ծերս ա կեռը..

Խնչի էք շալակս տուել էպան բեռը.  
Իմ մողքն ու խիղճն էլ մանկալի վնքին.  
Գութան, ես քու խերին դուրբան ..

Մեծ ակն ասաւ. «Կնդումս ա վեր տուած 12 սօլը.  
Չալիշ եկ արած ցելը գցէ դօլը.

Տես ինչ տեսակով ա լցնում ցորնով, դարով չօլը»:  
Գութան, ես քու խերին դուրբան...

Պուճուր ակն ասաւ. «Ես եմ երկու տարեկան տղայ.  
Աչերս ա քու,

Դուք չըգիտէք իմ տեղն ա զօռ.  
Կ'երթամ քարին, ծառին դիպէելով, ծլվալով  
Հօտաղն ու մանկալը կըգան ետեփս զլպալով»  
Գութան, ես քու խերին դուրբան...

Պոմէշն ասաւ. «Ես մի կոշտ բան եմ,  
Հօրօվէլ տաս՝ գութանն մենակ կըտանեմ,  
Քեասիրի միջակը մենակ կըհանեմ»:  
Գութան, ես քու խերին դուրբան...

Սանձկեփի եզը ասաւ. «Ես ղահրա կըքաշեմ.  
Ճիպօտ տալիս շատ կըքաշեմ.  
Հօրադա՝<sup>1)</sup> գուշին մի ուզանին <sup>2)</sup> կըմաշեմ»:  
Գութան, ես քու խերին դուրբան...

Լուճն ասաւ. «Վեց տեղ ծակած եմ.  
Զորսումս ա վեր տուած սամին.


Օչով չի կշատանայ իմ անուշ համին.  
Մանկալս պարտական է, որ իմաց անէ բարեկամին»:  
Գութան, ես քու խերին դուրբան...

<sup>1)</sup> ՄԵծ. <sup>2)</sup> Մի ցելումը.

Լուծն ասաւ. «օչով բան չի հասկանալ.  
Պօտօքը վրէս կը տաշի.  
Ուրարի հետ մեղքս կը քաշի.  
Իմ մեղքն ու խղճին էլ մանկալի շնքին.  
Գութան, ես քու խերին դուրբան...»

Գութանի ղալք<sup>9)</sup> եզր ասաւ.  
«անց կը կենամ հողի ղմբուզը  
կը հաստացնեմ իմ տուտուզը  
Հախներս կը լի բարեբար.  
Խօմար գոմչին կը դցենք քարեքար.  
Հօրիք եզն ասաւ. «Ես ման կածեմ գութանը սարէսար-  
մ հախն էլ կը լի բարեբար.  
Գութան, ես քու խերին դուրբան...»<sup>10)</sup>

Գրիգոր Թալասեանց



<sup>9)</sup> ԾՍՂ.

<sup>10)</sup> Ճանապարհորդելու առիթ ունենալով Լոռուայ գա-  
սռում հանդիպեցի մի խումբ գիւղացի գութանաւորների,  
որոնք բացօդեայ. Ընդարձակ դաշտերի տարածութեան վրայ  
վար էին անում գութանի պյս երզը երկելիս, որ տալիս  
եմ անփոփի և ձումայի ընթերցողներին, իբրև Լոռուայ ժո-  
ղովրդի անզիր և անարուեստ բանահիւսութեան փշրանքնե-  
րից մինը.